Գյումրի քաղաքի Աբովյան 260 հասցեում գտնվող,Ն.Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոցի դահլիճի մասնակի գույքի ձեռք բերման արժեքի նախնական հաշվարկ-ծավալաթերթ

| | Անվանում | Չ/Մ | Քանակը | Միավորի գին հազ.դր. | Ընդհանուրը (հազ.դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աթոռ | հատ | 100 | 11000 | 1100,0 |
| 2 | Կովրոլին | քառ.մ | 60 | 3500 | 210,0 |
| 3 | Վարագույր վելյուռից | մ. | 30 | 8000 | 240,0 |
| 4 | Բարակ վարագույր | մ. | 45 | 3000 | 135,0 |
| | | | | | |
| | Ընդամենը | | | | 1685,0 |

<<Էդգար և Նազելի>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

Է.Խնկոյան

Գյումրի քաղաքի Աբովյան 260 հասեցեում թիվ 1 Երաժշտական դպրոցի դասասենյակի վերահատակագծման և մասնակի վերանորոգման աշխատանքների արժեքի նախնական հաշվարկ - ծավալաթերթ

| | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/Մ | Քանակը | միավորի գին հազ.դր | Ընդհանուրը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | ԴԱՍԱՍԵՆՅԱԿ | | | | |
| 1 | Քանդման մաքրման աշխատանքներ | | | | 45,00 |
| 2 | Միջնորմներ, 70մմ հաստ.մետաղական հենակմախքով,50մմ հաստ. ձայնամեկուսիչ շերտով, երեսապատված երկու կողմից միաշերտ 12,5մմ հաստ. գիպսոստվարաթղթե սալիկներով, դռների շեպերի կառուցումով | $մ^2$ | 45,5 | 9,61 | 437,07 |
| 3 | Միջնորմների ներկում լատեքսային ներկով | 100մ2 | 0,9 | 232,53 | 209,28 |
| 4 | Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, 30մմ հաստ. | 100մ2 | 0,36 | 160,11 | 57,64 |
| 5 | Լամինատե հատակների ծածկույթի իրականացում, 12մմ հաստ, սպունգով | 100մ2 | 0,36 | 1016,28 | 365,86 |
| 6 | Ներքին ՄԴՖ-ից դռներ | մ2 | 3,78 | 63,50 | 240,02 |
| 7 | Էլ. Մոնտաժային աշխատանքներ | | | | 95,00 |
| | Ընդամենը | | | | 1449,87 |
| | ԱԱՀ 20% | | | | 289,97 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐԸ | | | | 1739,85 |

<<ԱՐՏ-ՆԱԽԱԳԻԾ>> ՓԲԸ ՏՆՕՐԵՆ

Հ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

*3104, ք. Գյումրի, Արոյան 260*

*հեռ (+374 312) 5-95-64;*

Հայաստանի Հանրապետության Շիրակի

Մարզի Գյումրի համայնքի ավագանու ՔՊ

խմբակցության ղեկավար՝ Քնարիկ

Հարությունյանին <<Ն. Տիգրանյանի

անվան թիվ 1 արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի

տնօրեն Գայանե Ղուկասյանից

Հեռախոս՝ 093-05-87-62

Դիմում-խնդրանք

Քանի որ դպրոցը շուտով տոնելու է իր ստեղծման 100 ամյակը, դրան ընդառաջ կցանկանայինք փուլային վերանորոգում կատարել, սկսել գոնե դահլիճից: Խնդրում ենք Ձեր աջակցությունը այդ հարցում: Ներկայացված է ամենասեղմ պահանջը: Խնդրում ենք չմերժել, քանզի արդեն քանի տարի է՝ դպրոցի հիմնման օրվանից, վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:

1.Դահլիճի մասնակի գույքի ձեռքբերում՝ 1685000 /մեկ միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ: Կից ներկայացնում ենք հաշվարկ- ծավալաթերթը:

2.Դասարանների սուղ լինելու պատճառով հարկավոր է 1 մեծ դասարանը կիսել: Դասասենյակի վերահատակագծման և մասնակի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է 1739000/մեկ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար/ ՀՀ դրամ:

Այս պահին դպրոցն ունի 362 աշակերտ և համայնքի բյուջեին յուրաքանչյուր ամիս ուսման վարձ է փոխանցում 1378000/ մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունութ հազար/ ՀՀ դրամ:

Այս վերանորոգման աշխատանքները ցանկալի է կատարել ամառային արձակուրդների ընթացքում՝ նոր ուսումնական տարվան ընդառաջ:

Դպրոցը հանրապետության մեջ առաջինն է եղել որպես երաժշտական դպրոց, և դպրոցի սաները փայլել են ու փայլում են աշխարհի ամենամեծ բեմերում, դպրոցն ունի բազում մրցանակներ և նվաճումներ այս տարիներին կուտակած: Աշխարագրական դիրքն այնպիսին է , որ գտնվում է տուրիստական բանուկ հատվածում: Դպրոցը գրեթե ամեն օր ունենում է տորիստների մեծ հոսք և կարծես թե նմանվել է թանգարանի: Շենքն իր ճարտարապետական լուծումներով քաղաքի զարդն է և կարիք ունի ներկայանալի հանդես գալու:

Կանխավ շնորհակալ ենք:

Դպրոցի տնօրեն՝ Գ. Ղուկասյան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ավագանի

**ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*

13 հունիսի 2022թ.

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Ձեզ է ներկայացվում Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից կազմված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ն.Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության դասասենյակի վերանորոգման եւ գույքի ձեռք բերման նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին» որոշման նախագիծը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ վերը նշված նախագիծն ընդգրկել Գյումրի համայնքի ավագանու հունիսի 22-ին կայանալիք հերթական նիստի օրակարգ:

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ